

ՈւՂԵՐՁ

Հայաստանի Հանրապետության Նախագահ պարոն
Արմեն Սարգսյանին

Հայաստանի Հանրապետության Վարչապետ պարոն
Նիկոլ Փաշինյանին

Պատճենը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով
Հայաստանի Հանրապետության Կառավարություն

Մեծարգո պարոն Նախագահ
Մեծարգո պարոն Վարչապետ

Ինչպես Ձեզ հայտնի է, 2018 թվականի հոկտեմբերի 19-ից „Վալլեքս“, խմբին պատկանող „Արմենիան Քափրո Փրոգրամ“, ՓԲԸ Ալավերդու պղնձաձուլական գործարանը դադարեցրել է իր արտադրական գործունեությունը:

Շուրջ երեք ամիս է, ինչ պղնձաձուլական գործարանի աշխատողները և Ալավերդի քաղաքը սպասողական, անորոշ վիճակում են: Ալավերդին և ալավերդցիները սպասում են, թե ինչպես են իրենց հետագան տնօրինելու և իրենց փոխարեն որոշելու ՎՏԲ բանկը, ձեռնարկության սեփականատերը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը:


Այն, ինչ այսօր կատարվում է Ալավերդի քաղաքում, հիշեցնում է ոչ հեռավոր անցյալը. երբ երեսուն տարի առաջ, ազգամիջյան ընդհարումների թեժ պահին, ստեղծված քաղաքական, հասարակական, սոցիալական և տնտեսական բարդ իրավիճակում կանգնեցվեց և լուծարվեց Ալավերդու պղնձաձուլական գործարանը:

Ընդերքի հարստությունների առկայության պայմաններում չհիմնավորված շռայլություն է հանքարդյունահանող արդյունաբերության զարգացման պետական խելամիտ ծրագիր չմշակելը: ՀՀ պետք է դադարի հումքային կցորդ լինելուց ոչ թե հանքարդյունահանող ձեռնարկությունները փակելու, այլ բնապահպանական լուծումներով հանքավերամշակող ձեռնարկություններ կառուցելու և մետաղական վերջնական արտադրանքով համաշխարհային շուկա մտնելու ճանապարհով: ՀՀ խտանյութը պետք է վերամշակվի ՀՀ-ում և դրանով իսկ նպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ի վերջո ծանր արդյունաբերության ոլորտի ձեռնարկություններն են ապահովում արական սեռին պատկանող բնակչության մեծաքանակ աշխատատեղեր:

Անհայտ է, թե ինչ է սպասվում գործարանին 2019 թ. մարտի 1-ից հետո: Գործարանի աշխատողները և քաղաքը սպասողական վիճակում են: Անցած երեք ամիսների ընթացքում Ալավերդին ասես կորցրել է իր գույները, տեսանելի պակասել է առօրյա եռուզեռը, քաղաքը մի տեսակ կծկվել ու փոքրացել է, քաղաքն անհանգիստ է:

Ազատ, անկախ, հպարտ և աշխատասեր ալավերդցիներն իրենց քաղաքը լքելու ոչ մի ցանկություն չունեն: Նրանք ընդամենը աշխատանք են ուզում, աշխատանք են ակնկալում և ոչ մի կապ չունեն դատ ու դատաստանների հետ: Ալավերդցիներն ունեն հարցի հանգուցալուծման իրենց տարբերակը և նրանց ամենևին հետաքրքիր չէ, թե իրավական ինչ և ինչպիսի հանգուցալուծումներ են անհրաժեշտ դրա համար: Գրավավարկային պարտավորությունների հարթության վրա պղնձաձուլական գործարանի համար 2019 թվականի մարտի 1-ը պետք է սահմանագծվի, որպես զրոյական վիճակ և գործարանը պետք է վերագործարկվի: Գործարանն ունի կայացած ու գործուն վարչարարական կառուցվածք, պայմանագրային աշխատողների մի կուռ կոլեկտիվ: Կաշենի, Քաջարանի և Ախթալայի պղնձի խտանյութերի հաշվին պետք է ապահովել Ալավերդու պղնձաձուլական գործարանը հույսով անհրաժեշտ քանակով: Համայնքին հարկավոր է, այս ամենին զուգահեռ պետական մակարդակով նպասել և իրագործել Չինական պղինձ ծրագիրը:

Այսինքն, ձեռնարկել խիստ կոնկրետ քայլեր Ալավերդուց արդեն իսկ պատրաստվող արտագաղթի երրորդ ալիքը կանխելու ուղղությամբ, ո՛չ թե ապագայում աշխատատեղեր խոստանալ, ո՛չ թե ապագայում ակնկալել մարդկանց հնարավոր ներգաղթ, որը կարող է և չլինել: Ցանկությունը դեռ իրականություն չէ: Կամենալը դեռ ապահովել չէ: Ժամանակը կարող է պարզապես չեղիքել: Ի վերջո դժոխքի ճանապարհը սալարկված է բարի նկատառումներով, որոնք կատարվել են ժողովրդի անունից, ժողովրդի համար և ի շահ ժողովրդի: Ժողովուրդն ամբողջություն կազմող անդեմ հասկացողություն չէ, ժողովուրդը կոնկրետ մարդկանց ամբողջություն է: Եվ կառավարության ցանկացած ծրագիր, ցանկացած որոշում, ցանկացած քայլ պետք է ուղղված լինի կոնկրետ մարդու բարօրությանը: Որովհետև ցանկացած պետության հզորության հենքը նրա ժողովրդի ամբողջությունը կազմող ամեն անհատի կենսակերպի բարելավումն է: Գովելի և ընդունելի է ՀՀ ներկա կառավարության տնտեսական զարգացման հայեցակարգը: Ինչ էլ որ նախատեսվի անել այդ ուղղությամբ, դրա համար պահանջվում է ժամանակ: Բոլոր ժամանակներում կեցությունն է որոշել, և հիմա էլ կեցությունն է որոշում գիտակցությունը, լինի դա հասարական, թե անհատական:

 Ռ. Զախարյան
 Ռ. Զախարյան
 Մ. Կարսյան
 Մ. Կարսյան
 Մ. Կարսյան
 Մ. Կարսյան
 Մ. Կարսյան
 Մ. Կարսյան

Blau d. 2^{te} / 1870
Fleisch d. 1870
P. d. 1870
Vf. d. 1870

**Հայաստանի Հանրապետության Նախագահ պարոն
Արմեն Սարգսյանին
Հայաստանի Հանրապետության Վարչապետ պարոն
Նիկոլ Փաշինյանին**

**Պատճենը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով
Հայաստանի Հանրապետության Կառավարություն**

**Մեծարգո պարոն Նախագահ
Մեծարգո պարոն Վարչապետ**

Ինչպես Ձեզ հայտնի է, 2018 թվականի հոկտեմբերի 19-ից „Վալլեքս“, խմբին պատկանող „Արմենիան Քափըր Փրոգրամ,, ՓԲԸ Ալավերդու պղնձաձուլական գործարանը դադարեցրել է իր արտադրական գործունեությունը:

Պատճառը, մի կողմից, ՎՏԲ բանկի առջև վերջինիս և „Վալլեքս“, խմբի՝ միջև վարկային պայմանագրի կնքման համար գրավադրված լինելու հետևանքով ծագած անուղակի վարկային պարտավորություններն են, մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից Ընկերությանն առաջադրված լրացուցիչ ֆինանսական պարտավորությունները:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկության աշխատողները ծանուցվել են Ընկերության կողմից իրենց հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերի՝ 2018 թվականի դեկտեմբերի 24-ից լուծման և իրենց միջև ձևավորված աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին: Սակայն Նոր տարվա նախաշեմին քաղաքում ավելորդ սոցիալական լարվածությունից խուսափելու նպատակով, որպես բարի կամքի դրսևորում ձեռնարկության սեփականատիրոջ կողմից, ծանուցումների ժամկետը երկարացվել է մինչև 2019 թվականի փետրվարի 28-ը:

Պղնձաձուլարանի արտադրական սարքավորանքը կանգնեցվել է վերագործարկման համար պատրաստ վիճակում, սակայն ինչքան երկարում է կանգառը, այնքան նվազում է ձեռնարկության անխափան վերագործարկման հնարավորությունն ու հույսը:

Այն, ինչ այսօր կատարվում է Ալավերդի քաղաքում, հիշեցնում է ոչ հեռավոր անցյալը. երբ նախկին պետական ռեժիմի դեմ Ղարաբաղ կոմիտեի ընդունած քաղաքական որոշումների և միևնույն ժամանակ մաքուր օդի ջատագովների հասարակական շարժումների միահյուսման արդյունքում, ազգի առողջության կարգախոսի ներքո, այլոց թվում կանգնեցվեց և լուծարվեց Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատը, լրիվ շրջափուլով արդյունաբերական մի հզոր ձեռնարկություն, որի տարեկան արտադրանքի գումարային արժեքը կազմում էր 106 մլն ռուբլի կամ ժամանակի արտարժույթով՝ մոտ 50 մլն ԱՄՆ դոլար, այն դեպքում, երբ Ալավերդի քաղաքի և

Թումանյանի շրջանի մնացած բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների և գյուղատնտեսական կառույցների տարեկան արտադրանքը կազմում էր ընդամենը 10-12 մլն ռուբլի: Ըստ թողարկվող արտադրանքի տեսականու կոմբինատի արտադրական հզորությունները կազմում էին տարեկան 40-50 հազ.տոննա սև պղինձ, 50-55 հազ.տոննա անոդային պղինձ, 40-45 հազ.տոննա կատոդային պղինձ, 35-40 հազ.տոննա վայերբարսային պղինձ, 150-180 հազ.տոննա ծծմբական թթու, 35-40 հազ.տոննա պղնձարջասպ, 80-83 տոննա թանկարժեք մետաղների ապարախյուս: Կանգնեցման պահին կոմբինատն ուներ 2400 աշխատող, Շամլուղ և Ախթալա բանավանների հետ միասին՝ 3600 աշխատող:

Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատը կանգնեցվեց և լուծարվեց ԽՍՀՄ Մետալուրգիայի նախարարության կոլեգիայի և Հայաստանի ԽՍՀ Մինիստրների խորհրդի 1989թ. 01 հուլիսի թիվ 66/317 համատեղ որոշման հիման վրա ԽՍՀՄ Մետալուրգիայի նախարարության 1989թ. 04 հուլիսի թիվ 200 հրամանով:

1988 թվականի աշնանը, ցուցարար բնապահպանների անկառավարելի դարձած մարդկային զանգվածները հանգստացնելու և բնապահպանական խնդիրն ինչ-որ կերպ հանգուցալուծելու նկատառումներով ԽՍՀՄ Մետալուրգիայի նախարարության կողմից որոշվել էր 1 տարի անց, 1989 թվականի աշնանը, դադարեցնել Ալավերդում պղնձի խտանյութերի վերամշակումը և ծծմբաթթվի արտադրությունը, ներկրովի պղնձի հիման վրա ընդլայնել պղնձի էլեկտրալիտիկ ռաֆինացման, մետաղական փոշիների և պղնձարջասպի արտադրությունները, ստեղծել մետաղական փոշիներից գլանվածքների արտադրություն, դրանով իսկ աշխատանքով ապահովելով կոմբինատի մետալուրգիական և ծծմբաթթվի արտադրամասերի փակման հետևանքով գործազրկվող բոլոր աշխատողներին:

Սակայն անկառավարելի դարձած մարդկային ամբոխի պահանջով, Հայաստանը երկրորդ Շվեյցարիա դարձնելու, տուրիզմով և հանքային ջրով երկիր պահելու քարոզիչների դրդմամբ, երկրաշարժի և պատերազմի վերածված ազգամիջյան ընդհարումների ֆոնի վրա ստեղծված ճակատագրական իրավիճակում, կոմբինատն ամբողջովին կանգնեցվեց: Ապամոնտաժվեցին մետալուրգիական, ծծմբաթթվի և պղնձի էլեկտրալիտիկ ռաֆինացման արտադրամասերի ողջ սարքավորանքը և մետաղակոնստրուկցիաները:

Հայաստանի ԽՍՀ Պետալանին, Հայգունմետ, Լույս, Նայրոն գիտա-արտադրական միավորումներին, Թումանյանի շրջսովետի և Ալավերդու քաղսովետի գործկոմներին Հայաստանի ԽՍՀ Մինիստրների խորհրդի հանձնարարականի համաձայն Ալավերդի քաղաքում կազմակերպվեցին լուսատեխնիկական իրերի և կոնդենսատորների արտադրություններ՝ կոմբինատի լուծարման հետևանքով աշխատանքից ազատվողներին աշխատանքով ապահովելու համար:

ԽՍՀՄ Մետալուրգիայի նախարարության 04 հուլիսի թիվ 200 և 1989թ.նոյեմբերի 27-ի թիվ 372 հրամաններով կոմբինատի հիման վրա ստեղծվեց Ալավերդու գունավոր մետաղների փորձարարական արդյունաբերական գործարանը, որի կազմում ընդգրկվեցին պղնձարջասպի, մետաղական փոշիների և օժանդակ սպասարկող արտադրամասերը:

Այսինքն, արվեց ամեն հնարավոր քայլ՝ համարժեք քանակով աշխատատեղեր ստեղծելու համար: Դրան հաջորդեց ԽՍՀՄ փլուզումը: Հայաստանի Հանրապետության տնտեսությունը կաթվածահար եղավ: Հայաստանի ԽՍ հանրապետությունը ԽՍՀՄ-ի միութենական հանրապետությունների մեջ եզակի արդյունաբերական ուղղվածություն ունեցող հանրապետություններից էր: Հայաստանում կար 30-ից ավելի միութենական ենթակայության և նշանակության, մի մասը՝ իրենց տեսակի մեջ եզակի, արդյունաբերական ձեռնարկություն: Եվ բնական է, որ երկրաշարժ-պատերազմ ֆոնի վրա, պետական միասնական համակարգի փլուզումից հետո, երբ բոլոր տնտեսական կապերը խզվեցին, Հայաստանի Հանրապետության ամբողջ տնտեսությունը կաթվածահար եղավ: Փակվեցին նաև կոնդենսատորների և լուսատեխնիկական իրերի արտադրությունները: Աշխատատեղ և աշխատանք ունենալու փոխարեն հազարավոր ալավերդցիներ ընտանիքներով արտագաղթեցին: Քաղաքից հեռեցան բազմաթիվ բարձրակարգ մասնագետներ:

Անկախությանը հաջորդած 1-2 տարիների ընթացքում Ալավերդին պարզապես դատարկվեց, որովհետև քաղաքի և ընդհանրապես Թումանյանի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական-հասարակական կյանքը պայմանավորված էր կոմբինատի գոյությամբ: Կոմբինատն իրավամբ քաղաքաստեղծ ձեռնարկություն էր, այնպես, ինչպես Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, Ղափանի հանքահարստացուցիչ ֆաբրիկան, Թումանյանի հրակայուն աղյուսների գործարանը: Եվ որպես այդպիսին հանդիսանում էր Ալավերդի քաղաքի և հանրապետության հյուսիսային շրջանների բարգավաճման ու բնակչության բարեկեցության կարևորագույն հիմնասյուներից մեկը, եթե՝ ոչ ամենակարևորը: Ալավերդի քաղաքի բազմաթիվ բնակելի, կուլտուր-մշակութային և կենցաղային շենքեր կառուցվել են կոմբինատի միջոցներով: Ավելին, Ախթալա և Շամլուղ բանվորական ավանները, /այժմ՝ քաղաքները/ ծնվել և կառուցապատվել են շնորհիվ Շամլուղի մետաղահանքերի և Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի: Քչերը գիտեն, որ ժամանակին Թիֆլիս-Ախալքալախի-Ղարս-Ալեքսանդրապոլ, Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Ղարս երկաթուղային հաղորդակցության ուղիների շինարարության ժամանակ ընտրվել է շինարարության տեսանկյունից ավելի բարդ երկրորդ տարբերակը պղնձահանքերին մոտ լինելու պատճառով: Թեև այսօր երկաթուղին էլ է մատնվել անգործության:

1991-1994թթ. մութ, ցուրտ, սոված տարիներին Ալավերդին հիմնականում շարունակում էր գոյատևել կոմբինատի ավերակների վրա ստեղծված գունավոր մետաղների գործարանի շնորհիվ: Օրհասական ժամանակներ էին, կյանքի ու մահու խնդիր էր, մի կողմից գործարանն իր ունեցած սուղ միջոցներով ու հնարավորություններով օգնում էր իր պատերազմող երկրին, մյուս կողմից փորձում ապահովել իր 1100 աշխատողների կենսական նվազագույն պայմանները և դրանով իսկ ապրեցնել Ալավերդին, որովհետև աշխատավարձի, տեխնիկական, դրամական և ապրանքային օգնությունների տեսքով Ալավերդում շրջանառվում էին գործարանի միջոցները, նպաստելով առևտրի և սպասարկման ոլորտի այլ ծառայությունների կազմակերպմանը ու աշխուժացմանը:

Հանրապետության տնտեսական շրջափակման տարիներին, անհրաժեշտ հումք և տեխնոլոգիական նշանակության այլ ապրանքներ և սարքավորանք ձեռքբերելու հնարավորությունից զրկվելով, փակվեցին պղնձարջասպի և մետաղական փոշիների արտադրամասերը, ինչին հետևեց ալավերդցիների երկրորդ մասսայական արտագաղթը:

Ինչ-որ կերպ գոյատևելու համար 1992 թվականի ապրիլին գունավոր մետաղների գործարանի ինժեներա-տեխնիկական անձնակազմը մշակեց և իրագործեց մի խելագար ծրագիր, իսկապես խելագար ծրագիր՝ մետաղական փոշիների արտադրամասի արտացոլիչ տիպի փոքրածավալ վառարանում վառելիքա-էներգետիկ միջոցների նվազագույն ապահովվածության պայմաններում սկսեցին վերամշակել պղնձարջասպի արտադրության ժամանակ առաջացած և գործարանի տարածքում առկա պղնձակիր խարամները:

Ժամանակը ստիպեց, որպեսզի Ալավերդին և ալավերդցիները սկսեն կոնկրետ քայլեր ձեռնարկել պղնձի արտադրությունը վերականգնելու ուղղությամբ: Կատարվեց քաղաքացիների ստորագրահավաք, որի հիման վրա գունավոր մետաղների գործարանի աշխատավորական կոլեկտիվը որոշում կայացրեց Ալավերդի քաղաքում պղնձի արտադրությունը վերսկսելու հարցով դիմել ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարություն: ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության կոլեգիայի 1994թ.փետրվարի 2-ին կայացած նիստում որոշվեց վերսկսել պղնձի արտադրությունը Ալավերդի քաղաքում /ՀՀ Արդյունաբերության նախարարության կոլեգիայի նիստի թիվ 04 արձանագրություն 04.02.1994թ./: Դրան հաջորդեց ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության 1994թ. փետրվարի 15-ի թիվ 39 հրամանը Ալավերդում Մանեսի գունավոր մետաղների գործարանում ոչ պակաս 5000 տոննա արտադրողականությամբ պղնձի արտադրությունը վերսկսելու մասին: Այնուհետև 1994թ. հունիսի 23-ին կայացավ Առաջին գումարման Թումանյանի շրջանային խորհրդի 13-րդ և Ալավերդու քաղաքային խորհրդի 12-րդ համատեղ նստաշրջանը „ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության կոլեգիայի որոշման կատարման ուղղությամբ քաղաքային խորհրդի դիրքորոշման մասին, օրակարգով, քանի որ պղնձի արտադրությունը դադարեցնելու մասին որոշումը կայացվել է 1989թ.մայիսի 12-ին տեղի ունեցած համատեղ նստաշրջանում /արձանագրություն 12/1 առ 23 օգոստոսի 1994թ./: Նստաշրջանին մասնակցում էին Թումանյանի շրջանային խորհրդի 32 և Ալավերդու քաղաքային խորհրդի 33 պատգամավորներ: Նստաշրջանը որոշում կայացրեց համաձայնել ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության կոլեգիայի առաջարկին և թույլատրել վերսկսել պղնձի արտադրությունն Ալավերդի քաղաքում ոչ պակաս 5000 տոննա արտադրողականությամբ՝ բնապահպանական բոլոր հիմնախնդիրների լուծումներով:

Պղնձարտադրության վերականգնման գործընթացների համար շրջանառու միջոցներ ապահովելու և հայթայթելու նկատառումներով գունավոր մետաղների գործարանը սեփականաշնորհվեց բաց բաժնետիրական ընկերության ձևով /ՀՀ Կառավարության 06 հուլիսի 1995թ. թիվ 580 որոշում Մանեսի գունավոր մետաղների գործարանը բաց բաժնետիրական ընկերության ձևով սեփականաշնորհելու մասին/:

Ժամանակը ցույց տվեց, որ միանգամայն ճիշտ քայլ էր գործարանը բաց բաժնետիրական ընկերության ձևով սեփականաշնորհելը, որովհետև հակառակ պարագայում պղնձաձուլականին էլ կարող էր բաժին ընկնել Վանաձորի քիմիական կոմբինատի և Նաիրիտ գիտաարտադրական միավորման ճակատագիրը:

1997 թվականից պղնձաձուլական գործարանը դարձավ „Վալլեքս“, խմբի սեփականությունը: Այնուհետև Հայաստանի Հանրապետության իշխանական, կառավարական, պետական կառույցների տնտեսական և քաղաքական իրարամերժ, անհաստատ, անհեռատես, անհիմն զարգացումների, զուտ ասիական գործելակերպի և ծագող խնդիրների զուտ ասիական հանգուցալուծման պայմաններում իրար հաջորդեցին պղնձաձուլական գործարանի կորուստների ու ձեռքբերումների, անկումների ու վերելքների երկար ու ձիգ տարիները:

Պղնձի արտադրության արդիականացման և բնապահպանական բոլոր լուծումներով ժամանակակից արտադրություն կազմակերպելու համար հարկավոր էր ապահովել սեփական հումքային բազա; ավելին, գերադասելի էր համաձայնության գալ Հայաստանի Հանրապետության մյուս հանքարդյունահանող ձեռնարկությունների հետ և մշակել Պետական Ծրագիր ՀՀ ամբողջ պղնձի խտանյութը կենտրոնացված կերպով վերամշակելու և վերջնական մետաղական արտադրանքի տեսքով համաշխարհային շուկա դուրս գալու համար: Այդ ուղղությամբ ՀՀ Կառավարություն ներկայացրած ծրագրերն ինչ-ինչ պատճառներով այդպես էլ պետական աջակցություն չստացան և կյանքի չկոչվեցին /25 օգոստոսի 1999թ. Լոռու պղինձ ծրագրի իրականացման աշխատանքային պլան; 15 հոկտեմբերի 1999թ. ՀՀ լեռնամետալուրգիական համալիրի զարգացման հայեցակարգ; 01 մարտի 2000թ. Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի 2001-2004թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր; Հայաստանի պղինձ ծրագիր/: Պղնձի արտադրության արդիականացման միասնական պետական ծրագրի փոխարեն սկսվեց աշխատանք սեփական հումքային բազա ստեղծելու ուղղությամբ; կառուցվեցին Արցախի և Թեղուտի լեռնահանքային համալիրները; ուրվագծվեց Չինական պղինձ ծրագիրը:

Այս ամենին զուգընթաց, գործող արտադրությունը բնապահպանական տեսանկյունից հնարավորինս անվտանգ դարձնելու նկատառումներով գործարանի ինժեներատեխնիկական անձնակազմի և Լեռնամետալուրգիայի ինստիտուտի կողմից իրականացվեցին մի շարք միջոցառումներ: Չնայած գործարանի ղեկավարության և ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից ձեռնարկված մեծ թվով միջոցառումներին, օբյեկտիվ և ինչ-որ տեղ սուբյեկտիվ պատճառների միահյուսման արդյունքում բնապահպանական խնդիրները մնացին չլուծված, սակայն սոցիալ-տնտեսական առումով Ալավերդին ընդհանուր առմամբ շահեց: Ալավերդին և տարածաշրջանը տեսանելի, շոշափելի, զգալի վերածնունդ ապրեցին. սոցիալական լարվածությունը պակասեց, տնտեսական-հասարարական կյանքն աշխուժացավ, փոխվեց մարդկանց կենսակերպը, բարելավվեց կենցաղը, աշխուժացավ անհատական և համայնքային շինարարությունը, պակասեց արտագաղթը, ավելացավ ծնելիությունը, արդյունքում՝ դպրոցներում ավելացավ

երեխաների թվաքանակը, տարեցտարի աճեց տարածաշրջանից ազգային բանակ զինակոչիկների թիվը:

Ինչ վերաբերում է արտանետումներին և բնապահպանական հիմնախնդիրներին, ապա ժամանակին Ալավերդու ԼՄԿ-ն ուներ այն ժամանակվա առնչադեմ տեխնոլոգիաներով հագեցած լրիվ շրջափուլով մետալուրգիական արտադրություն, արտանետվող ծծմբային գազերը վնասազերծվում էին ծծմբական թթվի տեսքով, հումքից և ծծմբային գազերից ծծմբի կորզման աստիճանը կազմում էր 74-76 տոկոս և կոմբինատին տրված էր տարեկան 31000 տոննա ծծմբային անհիդրիդի արտանետման թույլտվություն: Ներկայումս ծծմբային գազերն արտանետվում են մթնոլորտ, գործարանի արտադրողականությունն այնպիսին է, որ արտանետումների փաստացի քանակը համադրելի է կոմբինատի թույլատրված արտանետումների քանակի հետ, սակայն գազուտվածությունն անհամեմատելիորեն պակասել է: Բնապահպանական հիմնախնդիրները պետք է լուծվեն, բայց տուգանքները և արտադրություններ փակելը չեն հիմնախնդիրների հանգուցալուծման ուղիները:

2008-2009թթ. ՀՀ Կառավարության հանձնարարությամբ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի աշխատանքային խմբի կողմից մշակվել էր ՀՀ տնտեսական զարգացման հայեցակարգ, որի 12 գերակայությունների մեջ երրորդ հորիզոնականը զբաղեցնում էր հանքարդյունահանող և վերամշակող արդյունաբերությունը: Ցավոք, այդ հայեցակարգն այդպես էլ կյանքի չկոչվեց: ՀՀ ներկա կառավարությունն ունի իր տեսակետը ՀՀ տնտեսական զարգացման գերակայությունների մասին: Առաջնահերթությունը տրվում է գյուղատնտեսությանը, բարձր տեխնոլոգիաներին, տեքստիլ, ասել է թե թեթև արդյունաբերությանը, սննդարդյունաբերությանը, զբոսաշրջիկությանը, ասել է թե սպասարկման ոլորտին:

Անհայտ է, թե ինչ է սպասվում գործարանին 2019 թ. մարտի 1-ից հետո: Գործարանի աշխատողները և քաղաքը սպասողական վիճակում են: Անցած երեք ամիսների ընթացքում Ալավերդին ասես կորցրել է իր գույները, տեսանելի պակասել է առօրյա եռուզեռը, քաղաքը մի տեսակ կծկվել ու փոքրացել է, քաղաքն անհանգիստ է: